ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 102/60-Լ «26» 08 2024թ.

2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

1. Հաստատել 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտարկել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում և ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով կիրառել կարգապահական տույժ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյանի և Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան

1. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի ժամանակացույց

1. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **ուսումնական պարապմունքները սկսել.**

ա/ առկա ուսուցման համար՝ սեպտեմբերի 2-ից և ավարտել դեկտեմբերի 27-ին,

բ/ հեռակա ուսուցման 1-ին կուրսի համար՝ նոյեմբերի 11-ից և ավարտել հունվարի 25-ին,

գ/ հեռակա ուսուցման 2-րդ և ավելի բարձր կուրսերի համար՝ նոյեմբերի 4-ից և ավարտել հունվարի 25-ին,

դ/ առկա մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի[1] ավարտական կուրսի համար՝ սեպտեմբերի 2-ից և ավարտել հոկտեմբերի 25-ին:

ե/ հեռակա մագիստրատուրայի 60 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝ նոյեմբերի 4-ից և ավարտել դեկտեմբերի 6-ին:

2. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **ստուգարքների ընդունումը կազմակերպել.**

ա/ առկա ուսուցման համար՝ դեկտեմբերի 23-ից 30-ը,

բ/ հեռակա ուսուցման համար՝ հունվարի 20-ից 25-ը,

գ/ առկա մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝ հոկտեմբերի 21-ից 25-ը:

դ/ հեռակա մագիստրատուրայի 60 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝ նոյեմբերի 20-ից 22-ը:

3. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **քննաշրջանն անցկացնել.**

ա/ առկա ուսուցման համար՝ հունվարի 7-ից 27-ը,

բ/ հեռակա ուսուցման համար՝ փետրվարի 3-ից մարտի 1-ը,

գ/ առկա մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝ հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 1-ը,

դ/հեռակա մագիստրատուրայի 60 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝ դեկտեմբերի 9-13-ը:

---

[1] Հիմք՝ ԵՊՀ ԳԽ 2023թ. մարտի 23-ի թիվ 9/5 որոշմամբ հաստատված «ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ղեկավար ձեռնարկ:

4. 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **պարտքերի մարում սահմանել.**

ա/ առկա ուսուցման համար՝

- 1-ին լուծարքային շրջան՝ փետրվարի 3-ից 11-ը,
- 2-րդ լուծարքային շրջան՝ փետրվարի 17-ից 25-ը,

բ/ առկա մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝

- 1-ին լուծարքային շրջան՝ նոյեմբերի 4-ից 8-ը
- 2-րդ լուծարքային շրջան՝ նոյեմբերի 11-ից 15-ը,

գ/ հեռակա ուսուցման համար՝

- 1-ին լուծարքային շրջան՝ մարտի 10-ից 18-ը,
- 2-րդ լուծարքային շրջան՝ մարտի 24-ից ապրիլի 1-ը:

դ/ հեռակա մագիստրատուրայի 60 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝

- 1-ին լուծարքային շրջան՝ դեկտեմբերի 16-ից 20-ը,
- 2-րդ լուծարքային շրջան՝ դեկտեմբերի 23-ից 27-ը:

5. 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **ուսումնական պարապմունքները սկսել.**

ա/ առկա ուսուցման համար՝ փետրվարի 3-ից և ավարտել մայիսի 30-ին,

բ/ հեռակա ուսուցման համար՝ մարտի 10-ից և ավարտել մայիսի 31-ին:

6. Մագիստրատուրայի առկա 90 ECTS կրեդիտատարություն ունեցող և հեռակա 60 ECTS/120 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի թեզերի պաշտպանությունը կազմակերպել հունվարի 13-ից փետրվարի 7-ը:

8. Մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ Մագիստրատուրայի բաժին ներկայացնել 2024-2025 ուստարվա առկա և հեռակա ավարտական կուրսերի ուսանողների թեզերի ատեստավորման արդյունքները և «Մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցելու թույլտվություն տալու մասին» հրամանների նախագծերը՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ:

7. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ): Ամսական վճարման պարագայում 1-ին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել 2 ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

8. Ուսումնական պլանով նախատեսված բոլոր տեսակի պրակտիկաները սկսելուց 12 աշխատանքային օր առաջ պրակտիկայի բաժին ներկայացնել պրակտիկայի անցկացման հրամանների նախագծերը, իսկ մասնագիտական պրակտիկայի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պրակտիկայի բաժին ներկայացնել հաշվետվություն՝ ըստ հաստատված ձևաչափի (տրվում է պրակտիկայի բաժնի կողմից):

9. Ժամավճարային հիմունքներով յուրաքանչյուր ամիս կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրերը (աշխատանքների հանձնման ակտ) Բակալավրիատի բաժին ներկայացնել մինչև հաջորդ ամսվա 10-ը:

10. Աշխատողի՝ որևէ պատճառով բացակայելու դեպքում փոխարինող այլ աշխատողի ներգրավելու մասին զեկուցագիրը ԵՊՀ ռեկտորին կամ համակարգող պրոռեկտորին ներկայացնել բացակայող աշխատողի փոխարինման անհրաժեշտություն առաջանալու պահից առավելագույնը եռօրյա ժամկետում:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Սեպտեմբեր

-Մինչև սեպտեմբերի 2-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

-Մինչև սեպտեմբերի 4-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքի վերաբերյալ արդյունքները սահմանված ձևով:

-Մինչև սեպտեմբերի 5-ը կազմակերպել առկա ուսուցման Բակալավրիատի կրթական ծրագրերի 1-ին կուրսի ուսանողների համար «Ֆիզիկական դաստիարակություն» և «Օտար լեզու» դասընթացների խմբերի ընտրությունը գրանցումների էլեկտրոնային համակարգում (Ռեգիստրար):

-Մինչև սեպտեմբերի 9-ն Ընդհանուր բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի **առկա և հեռակա** ուսուցման դասընթացի կրկնման դիմումները՝ վճարման անդորրագրերով, իսկ համապատասխան զեկուցագրերն ուղարկել Mulberry էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

-Մինչև սեպտեմբերի 9-ը բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կիսամյակում դասավանդվող դասընթացների պլանները և ուսումնական նյութերը տեղադրել e-learning.ysu.am ուսուցման կառավարման համակարգի (ՈՒԿՀ) տիրույթում՝ համապատասխան դասընթացի էջում:

-Մինչև սեպտեմբերի 10-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի հաստատմանը ներկայացնել մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման համար վերապատրաստման դասընթացների 1-ին կիսամյակի մասնակիցների վերաբերյալ ՄԿԶԿ տնօրենի զեկուցագիր՝ հրամանագրման համար:

-Մինչև սեպտեմբերի 10-ը պրակտիկայի բաժին ներկայացնել ամռանը անցկացված ուսումնական պրակտիկաների հաշվետվությունները:

-Մինչև սեպտեմբերի 10-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել ՄՄՈՒՀ-ի շրջանավարտների առարկայական տարբերությունները հանձնելու ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

-Մինչև սեպտեմբերի 10-ը ուսումնական ստորաբաժանումների մանդատային հանձնաժողովներում հաստատել փոխատեղման (ռոտացիա) հավակնորդների ցուցակները և ներկայացնել Ֆինանսական վերլուծությունների վարչություն:

-Մինչև սեպտեմբերի 10-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի հաստատմանը ներկայացնել առաջին կիսամյակի համար պրոֆեսորի օգնականի համակնորդների ցանկը:

- Մինչև սեպտեմբերի 11-ը Ռեգիստրար համակարգում մուտքագրել դասախոսի կողմից հաստատված, ընթացիկ կիսամյակում դասավանդվող դասընթաց(ներ)ի (բացառությամբ 04.05.2017թ. հաստատված «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված դասընթացների, որոնց բաղադրիչների առավելագույն միավորների մուտքագրում և հաստատում չի պահանջվում) բաղադրիչների՝ ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ ստուգում, մասնակցություն, եզրափակիչ քննություն, առավելագույն միավորները:

- Մինչև սեպտեմբերի 18-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել տեսողական, լսողական և հենաշարժողական խանգարումներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հաշմանդամ ուսանողների ցանկը և այդ

ուսանողների դասապատրաստմանն օժանդակելու նպատակով ընտրված դասախոսների կամ ուսանողների տվյալները:

-Մինչև սեպտեմբերի 20-ը Ֆինանսական վերլուծությունների վարչություն ներկայացնել 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների տվյալները (տեղեկանք սոց. ապահովության ծառայությունից և ակադեմիական տեղեկագիր):

-Մինչև սեպտեմբերի 20-ը կազմակերպել մագիստրատուրայի առկա ուսուցման 60 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ուսանողների 2024-2025 ուստարվա կամընտրական առարկաների ընտրությունը գրանցումների էլեկտրոնային համակարգում (Ռեգիստրար):

-Մինչև սեպտեմբերի 23-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների հետ կնքվող պայմանագրերի նախագծերը՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ (2 օրինակ):

-Մինչև սեպտեմբերի 23-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների գործերը:

-Մինչև սեպտեմբերի 25-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսանողների հետ կնքվող լրացուցիչ մանկավարժի որակավորման համար պայմանագրերի նախագծերը՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ (2 օրինակ):

<u>Հոկտեմբեր</u>

-Մինչև հոկտեմբերի 3-ը Բակալավրիատի և Մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ «SuperVision» էլեկտրոնային կառավարման համակարգում (այսուհետ՝ SV համակարգ) ամրագրել առկա ուսուցման ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

-Մինչև հոկտեմբերի 8-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին ներկայացնել զեկուցագիր՝ 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակի մասին՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը): *Ներկայացված զեկուցագիրը նաև հիմք է ծառայում նշված քանակով տետրերը պահեստից ստանալու համար:*

-Մինչև հոկտեմբերի 21-ը Բակալավրիատի և Մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում մուտքագրել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի դասատախտակը (1-ին կուրսերինը՝ նախնական տարբերակով):

-Մինչև հոկտեմբերի 21-ը Մագիստրատուրայի բաժնի հետ SV համակարգում մուտքագրել ուսումնական ստորաբաժանման գիտխորհրդում հաստատված մագիստրատուրայի առկա ուսուցման 60 ECTS կրեդիտատարությամբ կրթական ծրագրերի 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաները և ընտրված ղեկավարների անվանական տվյալները՝ հիմք ընդունելով 2024-25 ուսումնական տարվա հաստատված անհատական ծանրաբեռնվածությունները:

Նոյեմբեր

-Նոյեմբերի 1-ից 7-ը ընդհանուր բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման դիմումները ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

-Մինչև նոյեմբերի 8-ը պրակտիկայի բաժին ներկայացնել 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատի ուսումնական պլաններով նախատեսված մասնագիտական պրակտիկաների անցկացման վայրերը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսանող թվի ու պրակտիկայի պլանները՝ նախապես համաձայնեցված ընդունող կողմերի՝ գործատուների հետ:

-Մինչև նոյեմբերի 8-ը Մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա ուսուցման 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի քննաշրջանի արդյունքները:

-Մինչև նոյեմբերի 14-ը Բակալավրիատի և Մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

-Նոյեմբերի 14-ից 20-ը SV համակարգում ամրագրել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

-Մինչև նոյեմբերի 15-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողների հետ կնքվող լրացուցիչ մանկավարժի որակավորման համար պայմանագրերի նախագծերը՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ (2 օրինակ):

-Մինչև նոյեմբերի 15-ը Կազմակերպչական բաժնի դիպլոմների սենյակի աշխատակիցների հետ համատեղ SV համակարգում ամրագրել 2023-2024 ուստարվա շրջանավարտների տվյալները:

-Մինչև նոյեմբերի 22-ը Մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա ուսուցման 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի 2-րդ լուծարքի արդյունքները:

-Մինչև նոյեմբերի 22-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների հետ կնքվող պայմանագրերի նախագծերը՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ (2 օրինակ):

-Մինչև նոյեմբերի 30-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

- Մինչև նոյեմբերի 29-ը կազմակերպել առկա ուսուցման 90 ECTS և հեռակա ուսուցման 60 ECTS կրեդիտատարություն ունեցող մագիստրոսական կրթական ծրագրերի ուսանողների 2024-2025 ուստարվա կամընտրական առարկաների ընտրությունը գրանցումների էլեկտրոնային համակարգում (Ռեգիստրար):

-Մինչև նոյեմբերի 29-ը SV համակարգում մուտքագրել ուսումնական ստորաբաժանման գիտխորհրդում հաստատված մագիստրատուրայի առկա ուսուցման 90 ECTS և հեռակա ուսուցման 60 ECTS կրեդիտատարությամբ կրթական ծրագրերի 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաները և ընտրված ղեկավարների անվանական տվյալները՝ հիմք ընդունելով 2024-25 ուսումնական տարվա հաստատված ծանրաբեռնվածությունները:

<u>Դեկտեմբեր</u>

-Մինչև դեկտեմբերի 2-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների ցուցակը:

-Մինչև դեկտեմբերի 2-ը Բակալավրիատի և Մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

-Մինչև դեկտեմբերի 6-ը Մագիստրատուրայի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 60 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի քննաշրջանի արդյունքները:

-Մինչև դեկտեմբերի 13-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հրամանները:

-Մինչև դեկտեմբերի 13-ը Կազմակերպչական բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության և նախապաշտպանության ժամանակացույցները:

-Մինչև դեկտեմբերի 17-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի հաստատմանը ներկայացնել մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման համար ուսուցման դասընթացների 2-րդ կիսամյակի մասնակիցների վերաբերյալ զեկուցագիր՝ հրամանագրման համար:

-Մինչև դեկտեմբերի 15-ը Մագիստրատուրայի բաժնի հետ SV համակարգում մուտքագրել ուսումնական ստորաբաժանման գիտխորհրդում հաստատված մագիստրատուրայի առկա ուսուցման 120 ECTS և հեռակա ուսուցմամբ 90 կրեդիտատարությամբ կրթական ծրագրերի 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաները և ընտրված ղեկավարների անվանական տվյալները՝ հիմք ընդունելով 2024-25 ուսումնական տարվա հաստատված ծանրաբեռնվածությունները:

-Մինչև դեկտեմբերի 15-ը Բակալավրիատի և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել 2024-2025 ուստարում իրականացվող միջմասնագիտական (միջդիսցիպլինար) ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (առկայության դեպքում) թեմաները, դրանք կատարող ուսանողների և համապատասխան ղեկավարների անվանական տվյալները:

-Մինչև դեկտեմբերի 20-ը Մագիստրատուրայի բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 60 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի 2-րդ լուծարքի արդյունքները:

-Մինչև դեկտեմբերի 25-ը առկա և հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրերի ուսանողների համար կազմակերպել «Շարժունության պատուհանի» դասընթացների ընտրությունը գրանցումների էլեկտրոնային համակարգում (Ռեգիստրար):

-Մինչև դեկտեմբերի 27-ը Բակալավրիատի և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել ուսումնական ստորաբաժանման գիտխորհրդում հաստատված միջմասնագիտական (միջդիսցիպլինար) ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (առկայության դեպքում) իրականացման վերաբերյալ հաշվետվությունները:

-Մինչև դեկտեմբերի 27-ը Մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա 120 ECTS կրեդիտատարությամբ և հեռակա 90 ECTS/120 ECTS կրեդիտատարությամբ կրթական ծրագրերի 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի ատեստավորում չանցած ուսանողների ցուցակը:

Հունվար

-Մինչև հունվարի 10-ը Բակալավրիատի և Մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

-Մինչև հունվարի 17-ը Բակալավրիատի բաժին ներկայացնել հաշվետվություն՝ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ (կարգի դրույթներին համապատասխան):

-Մինչև հունվարի 20-ը SV համակարգում մուտքագրել 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման դասատախտակները:

- Հունվարի 24-31-ը ընդհանուր բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

-Մինչև հունվարի 29-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի հաստատմանը ներկայացնել մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման համար վերապատրաստման դասընթացների 1-ին կիսամյակի մասնակիցների վերաբերյալ ՄԿԶԿ տնօրենի զեկուցագիր՝ հրամանագրման համար:

-Մինչև հունվարի 30-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել առկա ուսուցման քննաշրջանի արդյունքները, իսկ հաշվետվության 34-րդ ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

-Մինչև հունվարի 30-ը բակալավրատի բաժնի հետ SV համակարգում մուտքագրել ուսումնական ստորաբաժանման գիտխորհրդում հաստատված բակալավրի առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաները և ընտրված ղեկավարների անվանական տվյալները:

-Մինչև հունվարի 31-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

-Հունվարի 20-ից փետրվարի 10-ն Ընդհանուր բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի **առկա և հեռակա** ուսուցման դասընթացի կրկնման դիմումները՝ վճարման անդորրագրերով, իսկ համապատասխան զեկուցագրերն ուղարկել Mulberry էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

Փետրվար

-Փետրվարի 7-13-ը SV համակարգում ամրագրել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

-Մինչև փետրվարի 17-ը ՈՒԳՎ բաժին ներկայացնել առկա և հեռակա բակալավրիատի և մագիստրատուրայի ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքները (10-րդ ձև):

-Մինչև փետրվարի 25-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

Մարտ

-Մինչև մարտի 5-ը Կազմակերպչական և Մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հեռակա ուսուցման քննաշրջանի արդյունքները, իսկ հաշվետվության 34-րդ ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

-Մինչև մարտի 10-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի հաստատմանը ներկայացնել 2-րդ կիսամյակի համար պրոֆեսորի օգնականի համակնորդների ցանկը:

Ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան